

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Միհեր Քումունց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Վեռա Բոյան
Հայաստանի պատմության թանգարան
Veraboyan777@gmail.com

ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ (ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ)*

Հիմնաբառեր. Սյունիք, դրամական գանձ, արծաթե դրամ, Եվրոպա, Ասիա, ճանապարհ, առևտուր:

Սյունիքն իր պատմաքաղաքական և աշխարհագրական դիրքի շնորհիվ դարեր շարունակ եղել է միջազգային առևտրական ուղիների կարևոր հանգույցներից մեկը՝ իրար կապելով Պարսկաստանի առևտրաշատ քաղաքները և սևծովյան ավազանի առևտրական կարևոր կենտրոնները, ինչպես նաև Պարսկաստանից դեպի Եվրոպա տանող ճանապարհները: Այդ փաստող ապացույցներից են հայտնաբերված բազմաթիվ դրամական գանձերը և առանձին դրամները, որոնք ներառում են պատմական տևական ժամանակաշրջան՝ անտիկից ուշ միջնադար, առանց ընդհատումների:

Հարկ է նշել, որ Սյունիքը Հայաստանի դրամական գանձերով ամենահարուստ տարածքներից մեկն է: Եթե այս կամ այն տարածքին հատուկ է որոշակի ժամանակաշրջանի թողարկումների քանակային գերազանցում մյուսների համեմատ, ապա Սյունիքից հայտնի են և՛ անտիկ, և՛ միջնադարյան, և՛ նոր ժամանակաշրջանների դրամական գանձեր:

Պատմական Սյունիքը Հայկական լեռնաշխարհի առանցքային տարածքներից է՝ շատ հարուստ հնագիտական հուշարձաններով: Այդ հուշարձանները հետազոտվում են սկսած 19–20-րդ դարերից (Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի, Ս. Եսայանի, Լ. Բարսեղյանի, Օ. Խնկիկյանի, Ա. Այվազյանի, Հ. Սիմոնյանի, Վ. Ավետյանի, Պ. Ավետիսյանի, Բ. Գասպարյանի, Մ. Զարդարյանի և ուրիշների կողմից) ու բացահայտում են այն հսկայական ներուժը, որն ունի տարածաշրջանը (Ավետիսյան 2015, 5): Սյունիքից հայտնաբերված առանձին գանձեր ուսումնասիրել և ներկայացրել է Խաչատուր Մուշեղյանը (Մուշեղյան 1973: Մուշեղյան 1989, 123–132):

Պատմական Սյունիքի տարածքը պատմական տարբեր ժամանակաշրջանում ընդգրկել է տարբեր սահմաններ. հզորության շրջանում, երբ անկում էր ապրում Արաբական խալիֆայությունը, Սյունիքը իր մեջ ներառում էր Վայոց ձոր և Գեղարքունիք գավառները, որոնք ժամանակ առ ժամանակ անջատվում էին՝ միանալով Անիի Բագրատունյաց թագավորությանը: Սյունիքը ընդգրկել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) Քաշաթա-

* Ստացվել է 15.08.2022թ., ուղարկվել է գրախոսման 04.09.2022թ., ընդունվել է տպագրության 18.11.2022թ.:

ղի շրջանը (2020 թ. դրությամբ) և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության արևելյան մասը (Գրիգորյան 2006, 135–136: Патканова 1877):

Սույն աշխատանքում առանձնացվել են Հայաստանի պատմության թանգարանում պահվող ներկայիս Սյունիքի և Վայոց ձորի մարզերի տարբեր վայրերից և Սևանի ավազանի հարավային և հարավ-արևմտյան տարածքներից հայտնաբերված դրամական գանձերը: Ուսումնասիրության արդյունքում դրանք դասակարգվել են ըստ թողարկող երկրների, ժամանակաշրջանների: Տրվում է դրամական գանձերի բնութագիրը, դրանցում առկա դրամների մետաղական համամասնությունը: Գանձերն ընդգրկում են սելևկյան, պարթևական, սասանյան, արաբական, սելջուկյան, մոնղոլական, պարսկական, օսմանյան, արևմտաեվրոպական ոսկե, արծաթե և պղնձե դրամներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունի պատմական խնդրահարույց հարցերի լուսաբանման համար, իսկ դրանց քարտեզագրումն՝ ըստ հայտնաբերման վայրերի, նոր լույս կարող է սփռել առևտրական ճանապարհների ուսումնասիրության վրա (նկ. 1):

ՀՊԹ-ում պահվող՝ Սյունիքից պատահաբար կամ կանոնավոր պեղումների արդյունքում հայտնաբերված դրամական գտածոները ընդգրկում են մ. թ. ա. 5-րդ դարից մինչև մ. թ. 19-րդ դարն ընկած ժամանակահատվածը:

Հայաստանի տարածքում դրամի ներթափանցման ամենավաղ վկայություններից է 1963 թ. Սիսիանում՝ տան հիմքը փորելիս, հայտնաբերված մ. թ. ա. 5-րդ դարի երկրորդ կեսով թվագրվող աթենական արծաթե տետրադրախման (նկ. 2): Աթենական տետրադրախմաները լայն ճանաչում ունեին հունական աշխարհից դուրս նաև արևելյան երկրներում (Վարդանյան 2018, 8–9): Մեզ համար հետաքրքրական է դրամի Սյունիքից հայտնաբերման փաստը, որը ցույց է տալիս դեռ վաղ ժամանակից սկսած այդ տարածքի կարևոր ճանապարհային հանգույց լինելը:

Սյունիքի դրամական գանձերի շարքում պատմական և մշակութային մեծ նշանակություն ունի Սառնակունքի հայտնի գանձը՝ հայտնաբերված 1945 թ., որն ուսումնասիրել է նշանավոր դրամագետ Խաչատուր Մուշեղյանը (Մուշեղյան 1973): Նա ներկայացրել է գանձի հայտնաբերման, ձեռքբերման պատմությունը, դասակարգել է դրամները, խմբավորել ըստ ժամանակաշրջանի, գահակալների, տվել է դրամների կշռային տվյալները: Հիմնվելով ուսումնասիրված տվյալների վրա կարող ենք փաստել, որ Սառնակունքի գանձը տարածաշրջանի դրամական գանձերի շարքում եզակի է: Այն բաղկացած է Հռոմեական հանրապետության՝ 225 և հելլենիստական տարբեր երկրների՝ մակեդոնական, սելևկյան, պարթևական, պոնտական, հայկական, կապադովկյան արքաների, փյունիկյան և փոքրասիական քաղաքների 148 արծաթե դրամներից: Գանձի վաղագույն դրամները թվագրվում են մոտավորապես մ. թ. ա. 2-րդ դարի կեսով, իսկ ամենաուշ դրամը Մարկոս Անտոնիոսի՝ մ. թ. ա. 32/1 թ. թողարկած դենարն է: Ենթադրվում է, որ գանձը կուտակվել է մի քանի փուլով և թաքցվել է մ. թ. ա. 1-ին դարի 30-ական թթ. վերջին–20-ական թթ. սկզբին: Գանձի դրամները ներկայացվել են նաև դրամագետ Ռուբեն Վարդանյանի կողմից (Վարդանյան 2018, 8–20):

Պատմական մեծ արժեք է ներկայացնում նաև Սիսիանի գանձը՝ հայտնաբերված 1986 թ., որը բաղկացած է բացառապես արծաթե թողարկումներից՝ կազմված սասանյան, արաբական, արաբասասանյան, թաբարիստանյան լիարժեք դրամներից: Այն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Խաչատուր Մուշեղյանը (Մուշեղյան 1989, 123–132: Մուշեղյան 1990, 140–185): Գանձի սասանյան դրամները ներկայացրել են Արմինե Ջոհրաբյանը և Էդուարդ Խուրշուդյանը (Ջոհրաբյան 2021: Zohrabian 2000): Սիսիանի գանձում սասանյան դրամների հետ հայտնաբերված օմայան և աբասյան դրամների առկայությունը ցույց է տալիս, որ սասանյան դրամները Հայաստանի տարածքում օգտագործվել են մինչև 10-րդ դարը, այսինքն սասանյան կայսրության վերացումից հետո ևս (Zohrabian 2000, 17):

1970 թ. բացված Սիսիանի նշանավոր «իշխանական» դամբարանից Փռուգիայի Լիսիմաքոսի ոսկե դրամի Կոլխիսի ընդօրինակությունից (ՀՊԹ 18644) բացի գտնվել են հունական, պարսկական և սելևկյան 13 արծաթե դրամներ, որը հրատարակել է դրամագետ Ռ. Վարդանյանը (Խաչատրյան 2009, 82–87):

Բացառիկ արժեք է ներկայացնում 1965 թ. Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղից հայտաբերված Աբու ալ-Աբբաս ալ-Սաֆֆահի (750–754) ոսկե դինարը (ՀՊԹ 17949), որն առաջին անգամ հրատարակել է Արմինե Ջոհրաբյանը (Ջոհրաբյան 2021, 79–80):

Վահանավանքի պեղումների ժամանակ երկհարկանի եկեղեցու հյուսիս-արևմուտքից հայտնաբերվել է սելջուկյան և մոնղոլական 15 դրամ, ինչպես նաև մեծ տաճարի գավթի արևմտյան պատի մերձակայքում հայտնաբերվել է արաբական դիրհեմների մանրացված բեկորներ (նկ. 3): Կտրատված դրամները շրջանառության մեջ են եղել 10–11-րդ դարերում՝ որպես օրինական վճարման միջոց: Այս երևույթը բացատրվում է միջազգային շուկայում արծաթի պակասով: Արաբական դիրհեմների տարբեր կշռի 17 բեկորներ են հայտաբերվել: Դրամներին անդրադարձել և մակագրությունները թարգմանաբար ներկայացրել է Արմինե Ջոհրաբյանը (Գրիգորյան 2007, 81–83): Համաժամանակյա կտրտված դրամների գանձի օրինակ է նաև Գեղարքունիքի մարզի Մարտունու գանձը (ՀՊԹ 18170: Ջոհրաբյան 2021, 79) (նկ. 4):

Բյուզանդական ոսկե դրամներ են գտնվել 1957 թ. Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում (Ռոմանոս IV, 1067–1071) (ՀՊԹ17425), 1963 թ. Տաթևի վանքի փլատակների մեջ (11-րդ դ.) (ՀՊԹ 17761), 1989 թ. Կապանի շրջան Գեղանուշ գյուղում այգում հողային աշխատանքների ժամանակ (Ռոմանոս IV, 1067–1071) (ՀՊԹ 19748):

Շադաղյան 11-րդ դարի դրամների գանձ (109 ամբողջական և 8 կտրտված արծաթե դրամներ) (ՀՊԹ 17899/1-117) է հայտնաբերվել 1965 թ. Վարդենիս[1] գյուղում հողային աշխատանքների ժամանակ: Ալեքսանդր Հակոբյանը փաստում է, որ Խաչենը և Սյունիքը կարևոր տարածք են եղել Շադաղյանների համար, որը նաև հաստատում են գտնված դրամական նյութերը (Акобян 2018, 53–56): Խաչեն

1 Մինչև 1969 թ. անվանվել է Բասարգեչար, Մասրիկ գետի հովտում:

գավառի սահմաններն անցնում էին արևմուտքում Սևանա լճի արևելյան ափերով՝ ընդգրկելով Սոդք և Գեղամա գավառները (Ալեքսանյան 2017, 32–46):

Աբասյան 10 արծաթե դրամ (ՀՊԹ 14516/1-9; 14517) են գտնվել 1939 թ. Վերին Գետաշեն գյուղում:

Սյունիքի տարածքից հայտնաբերված դրամական գանձերի շարքում առկա են նաև մոնղոլական դրամներ՝ Սիսիանի մոտակայքից 1931 թ. հայտնաբերված կճուճի մեջ մեկ դրամ (հավանաբար թալանված գանձ է) և 1957 թ. հայտնաբերված 4 դրամ և Վայքում 1934 թ. գտնվել է 68 արծաթե դրամ (ՀՊԹ 11073; 17450/1-4, 12708-12775):

Սյունիքում մոնղոլական տիրապետության շրջանում դրամահատության գործընթացը ակտիվ էր: Գտնվել են այդ շրջանի երեք դրամահատարաններ՝ Եղեգիսում, Աճանայում (Բաղաբերդ ամրոցում) և Մադանում (Օրբելյանների կենտրոն Կապանում) (Акобян 2015, 123–160): Ա. Հակոբյանը առանձին ուսումնասիրությամբ անդրադառնում է Եղեգիսի դրամական թողարկումներին՝ նշելով, որ ուսումնասիրողներին այն հայտնի է 19-րդ դարից սկսած: Դրամահատարանի անվանումը երկար ժամանակ նույնացվում էր Հյուսիսային Օսիայի Ալաջիր քաղաքի հետ, հետագայում դրամագետները առաջարկում են անվան այլ ընթերցումներ: Սակայն տեղորոշելով և հաշվի առնելով մոնղոլ իլխանների տիրապետության ժամանակաշրջանը այն նույնացվում է Սյունիքի *Եղեգիս* տեղանվան հետ (Akopyan 2006, 6–10):

Հայտնաբերված գանձերում զգալի թիվ են կազմում պարսկական (սեֆյան, աֆշարյան) 16–18-րդ դդ. դրամները: Պարսկական դրամների գանձեր են հայտնաբերվել Խնձորեսկ գյուղում (1920 թ., 34 արծաթե դրամ), Գորիսում (1983 թ., 590 արծաթե դրամ), Կապանում (1971 թ., 342 արծաթե դրամ), Սիսիանում (1969 թ., տան նկուղում, 609 արծաթե դրամ), Բռնակոթ գյուղում (1970 թ., 31 արծաթե դրամ, 17-րդ դ.), Ուզ գյուղում (այժմ՝ Ույծ, 1946 թ., տան բակում 165 արծաթե դրամ), Անգեղակոթ գյուղում (1979 թ., հողային աշխատանքների ժամանակ, 137 արծաթե դրամ): Ամենամեծ գանձը գտնվել է Մեղրիում՝ 1959 թ. տան պատի միջից, շինարարական աշխատանքների ժամանակ, սափորի մեջ լցված 2515 արծաթե դրամները թվագրվում են 17–18-րդ դարերով: Մեղրիից (1895 թ., բնակարանի հիմքը փորելիս) հայտնաբերվել են նաև 15 պղնձե դրամներ:

Հետաքրքրական են նաև Սյունիքից հայտնաբերված այն գանձերը, որոնք ներառում են արևմտաեվրոպական դրամներ: Այսփաստը հաստատում է, որ Սյունիքը հանդիսացել է կարևոր աշխարհագրական հանգույց դեպի Եվրոպա տանող առևտրական ճանապարհի ձևավորման գործում: Դարեր շարունակ Հայաստանը եղել է տնտեսական և քաղաքական խաչմերուկ Արևմուտքի և Արևելքի միջև: Միջազգային առևտրական գործընթացում անգնահատելի է հայ վաճառական դասի դերը: Այս թեմային անդրադարձել են բազմաթիվ հայ և օտարազգի հեղինակներ (Բայբուրդյան 1987, 104–118: Խաչիկյան 1988: Հովհաննիսյան 2017, 49–76: Պապիկյան 2018, 129–141): Հայ առևտրական դասը կապող օղակ է եղել եվրոպական և ասիական երկրների միջև՝ խթանելով հայ և տարբեր ժողովուրդների մշակութային փոխառնչությունների զարգացմանը, որի արտացոլումը կարող ենք տեսնել Սյունիքի դրամական գտածոների մեջ:

Վերոհիշյալ գանձերի շարքում է 1984թ. Նուվարդին (այժմ՝ Նոնաձոր) գյուղում տուն կառուցելիս պատահաբար հայտնաբերված պարսկական, օսմանյան և արևմտաեվրոպական 29 արծաթե դրամներից բաղկացած գանձը (ՀՊԹ 19381/1-29):

Ասվածը փաստող լավագույն ապացույցներից է Մեղրիում շինարարական աշխատանքների ժամանակ 1961թ. գտնված գանձը՝ բաղկացած հոլանդական 18 ոսկե և պարսկական 14 արծաթե դրամներից (ՀՊԹ 17702/1-18: ՀՊԹ 17703/1-14: 17704: 17705): Հետագայում նույն վայրից լրացուցիչ պեղումների արդյունքում գտնվել են պարսկական, օսմանյան և արևմտաեվրոպական 50 արծաթե դրամ (ՀՊԹ 17714/1-50):

Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում 1966թ. հայտնաբերվել է ավստրո-հունգարական 2 արծաթե դրամ. ենթադրվում է, որ այն գանձի մնացորդ է (ՀՊԹ 17968/1-2):

Շվեյցարական 18-րդ դարի մեկ ոսկե դուկատ է հայտնաբերվել Միկոյանի (1957.-ից՝ Եղեգնաձորի շրջան) Աղնջաձոր գյուղից 1938թ. (ՀՊԹ 14440):

Մեղրիից հայտնաբերված գանձերի մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1961թ. հայտնաբերված վենետիկյան ոսկե դուկատների գանձը՝ բաղկացած 24 դուկատից և մեկ կես դուկատից: Գանձը պարունակում է հետևյալ դոժերի թողարկումները՝ Մարկանտոնիո Ջուստինիանիի (1684–1688) 3 դուկատ, Ֆրանչեսկո Մորոզինիի (1688–1694) 1 դուկատ, Միլվեստրո Վալիերիի (1694–1700) 1 դուկատ, Ալվիզե II Մոչենիգոյի (1700–1709) 3 դուկատ, Ջովանի II Կորնարոյի (1709–1722) 14 դուկատ և Ալվիզե Պիզանիի (1735–1741) 1 կես դուկատ: Գանձում եղած դուկատներից ամենամեծաքանակը Ջովանի II Կորնարոյի թողարկումներն են: Գանձի ամենավաղ թվագրվող դրամը Մարկանտոնիո Ջուստինիանիի (1684–1688) դուկատն է, իսկ ամենաուշը՝ Ալվիզե Պիզանիի (1735–1741) կես դուկատն է: Այսպիսով, այն պարունակում է շուրջ 40 տարիների ընթացքում Վենետիկի հանրապետությունը հաջորդաբար կառավարած հինգ դոժերի դուկատներ, և միայն Ալվիզե Պիզանիի կես դուկատն է, որն առանձնանում է ոչ միայն ժամանակով, այլև դրամի արժեչափով: Ելնելով եղած տվյալներից, գանձի ձևավորումն ավարտվել է 1740-ական թվականներին (Բոյան 2021, 135–141):

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Սյունիքից պատահաբար կամ պեղումների արդյունքում հայտնաբերված տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող դրամական գանձերի շարքում գերակշիռ թիվ են կազմում ոսկե և արծաթե դրամներից կազմված գանձերը: Այս հանգամանքը մեկ անգամ ևս փաստում է, որ Սյունիքը հանդիսացել է առևտրական ուղիների խաչմերուկ, մի տարածք, որտեղով անցել են միջազգային առևտրական կարևորություն ունեցող ճանապարհները: Քանի որ արծաթե և հատկապես ոսկե դրամները հիմնականում նախատեսված էին արտաքին առևտրական գործունեության համար, իսկ պղնձե դրամները՝ ներքին շուկայի համար:

Պատմամշակութային խնդիրների լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի դրամների ուսումնասիրությունը: Դրամը՝ որպես երկրի քաղաքական,

սոցիալ-տնտեսական, պատմական և մշակութային հարցերի ուսումնասիրության աղբյուր, բացահայտում է տարբեր ժամանակաշրջանում երկրների միջև առևտրա-տնտեսական հարաբերությունները: Այդ առումով բացառիկ կարևորություն են ներկայացնում դրամական գանձերը: Բազմաքանակ դրամական գանձերի հայտնաբերումը Սյունիքից մեկ անգամ ևս փաստում է այդ տարածքի կարևոր նշանակությունը համաշխարհային տարանցիկ առևտրական գործընթացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թանգարանային առարկաներ

ՀՊԹ 11073
ՀՊԹ 14440
ՀՊԹ 14516/1-9
ՀՊԹ 14517
ՀՊԹ 17425
ՀՊԹ 17450/1-4
ՀՊԹ 17702/1-18
ՀՊԹ 17703/1-14
ՀՊԹ 17704
ՀՊԹ 17705
ՀՊԹ 17714/1-50
ՀՊԹ 17761
ՀՊԹ 17899/1-117
ՀՊԹ 17949
ՀՊԹ 17968/1-2
ՀՊԹ 18170
ՀՊԹ 18644
ՀՊԹ 19381/1-29
ՀՊԹ 19748

Գրականություն

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ 2017 – Ալեքսանյան Տ., Միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությունը Խաչենի իշխանության տարածքում, «Էջմիածին» ամսագիր, 2017, սեպտեմբեր, 32 – 46 էջ:

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2015 – Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ., Բրոնզ-Երկաթեդարյան Սյունիքի Սրբազան լանդշաֆտը, Հնագիտական հետազոտություններ, Երևան, 2015:

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ 1987 – Բայբուրդյան Վ. Ա., Միջերկրածովյան առևտրական ճանապարհը և հայ վաճառականների առևտուրը արևմտյան Եվրոպայի երկրների հետ XVII դարում, «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 1987, էջ 104 – 118:

ԲՈՅԱՆ 2021 – Բոյան Վ., Վենետիկյան դուկատների գտածոները Հայաստանում, «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», N 8, Երևան, 2021, էջ 135 – 141:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2006 – Գրիգորյան Գ., Սյունիքի թագավորությունը (X – XII դարեր), «Պատմաբանասիրական հանդես», N 2, Երևան, 2006:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2007–Գրիգորյան Գ., Վահանավանք, Ձանգակ հրատ., Երևան, 2007:

ՋՈՀՐԱԲՅԱՆ 2021–Ջոհրաբյան Ա., Հայաստանի դրամական տնտեսությունը III–X դարերում: Սասանյան և արաբական շրջան, Երևան, 2021:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2009–Խաչատրյան Ժ., Հայաստանի հնագիտական հուշարձաններ, Հ.21, Սիսիանի դամբարանը, Երևան, 2009:

ԽԱՉԻԿՅԱՆ 1988–Խաչիկյան Շ.Լ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII–XVIII դարերում, Երևան, 1988:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2017–Հովհաննիսյան Ս., Հայ առևտրական կապիտալն իբրև «աշխարհ-տնտեսություն», «Վէմ հանդէս», թիվ 1, Երևան, 2017, էջ 49–76:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973–Մուշեղյան Խ.Ա., Հայաստանի դրամական գանձերը, Հ.1, Երևան, 1973:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1989–Մուշեղյան Խ.Ա., Սյունիքի դրամագիտական գանձը, «Պատմա-բանասիրական հանդես», N 2, Երևան, 1989, էջ 123–132:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1990–Մուշեղյան Խ.Ա., Սյունիքի դրամական գանձը, Հանդէս ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, թիւ 1–12, Վիեննա, 1990, էջ 140–185,

ՊԱՊԻԿՅԱՆ 2018–Պապիկյան Ք.Վ., Նոր Ջուղայի վաճառականները՝ որպես Իրանի և Արևմտյան Եվրոպայի միջև առևտրի միջնորդներ, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, Երևան, 2018, էջ 129–141:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2018–Վարդանյան Ռ., Ջոհրաբյան Ա., Հովհաննիսյան Հ., Մուղալյան Գ., Վարդանյան Ա., Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը, Երևան, ՀՀ Կենտրոնական բանկ, 2018:

AKOPYAN 2006–Akopyan A., The mint of EBegis ("Alg+r") and its localization // Journal of Oriental Numismatic Society, N 188, London, 2006, pp.6–10.

ZOHRABIAN 2000–Zohrabian A., Khurshudian E., Sassanian coins of Armenia, Almaty, 2000.

АКОПЯН 2015–Акопян А.В., Ильханы и ишханы. Монеты армянских княжеств периода заката Хулагуидского государства (737–759 гг. х. / 1336–1358 гг.). В сб.: Нумизматика и эпиграфика. Вып. XIX, Москва, 2015, Табл. XLVII–XLIX.

АКОПЯН 2018–Акопян А., На что Фадл II Шаддадид купил город Ани в 1072г.?, Нумизматические чтения Государственного Исторического музея, Москва, 2018, с.53–56.

ПАТКАНОВА 1877–Патканова К.П., «Армянская География VII века по Р.Х (приписывавшаяся Моисею Хоренскому)». Пер. с др.-арм. и коммент, СПб, 1877 (http://vehi.net/istoriya/armenia/geographiya/04.html).

Vera Boyan
History museum of Armenia
Veraboyan777@gmail.com

SYUNIK-COMMERCIAL AND CULTURAL CROSSROADS (BY HOARD)

Keywords. Syunik, hoard, silver coin, Europe, Asia, road, trade.

Due to its historical, political and geographical position, Syunik has been one of the important junctions of trade routes for centuries. Among the evidence of all this are the numerous found treasures of money and individual coins, covering a long historical period-from antiquity to the late Middle Ages-without a break.

In this work, hoards found in different places of Syunik, stored in the History Museum of Armenia, were highlighted. As a result of the study, they were classified by issuing coun-

tries, by period, the typology of coins was given, the iconography and the circumstances of their discovery were classified and considered. The hoards include Seleucid, Parthian, Sassanian, Mongolian, Arabic, Persian, Ottoman, Western European and other coins, the study of which may be of great source and significance for solving historical issues.

In this context, the study of coins can be of great importance in solving existing geopolitical problems. Money, as an important political, social, economic, historical and cultural object of the country, reveals trade and economic relations between countries in different periods. In this sense, hoards are important. The discovery of numerous hoards confirms the importance of the region in the global process of transit trade, as well as the existing interactions between peoples.

The region played an important role in the global trade process, being located on transit routes connecting countries that played a large role in trade relations. It was a connecting link from the trading cities of Persia to Armenia and from here to the important trading centers of the Black Sea.

Thus, for centuries, Armenia has been considered an economic buffer country and a neutral area for international trade activities. In this process, the role of the Armenian merchant class in the development of the history, culture and economy of the Armenian people is invaluable. The Armenian merchant class acts as a connecting link between European and Asian countries, promoting the development of cultural exchanges between peoples.

Вера Боян
Музей истории Армении
Veraboyan777@gmail.com

СЮНИК – КАК ТОРГОВЫЙ И КУЛЬТУРНЫЙ ПЕРЕКРЕСТОК (ПО ДЕНЕЖНЫМ КЛАДАМ)

Ключевые слова: Сюник, денежный клад, серебряная монета, Европа, Азия, дорога, торговля.

Благодаря своему историческому, политическому и географическому положению Сюник на протяжении веков был одним из важных узлов торговых путей. Среди доказательств всего этого – найденные многочисленные денежные клады и отдельные монеты, охватывающие длительный исторический период – от античности до позднего средневековья – без перерыва.

В этой работе были выделены денежные клады, найденные в разных местах Сюника, хранящиеся в Музее истории Армении. В результате исследования они были классифицированы по странам-эмитентам, по периоду, дана типология монет, классифицированы и рассмотрены иконография и обстоятельства их обнаружения. К кладам относятся селевкидские, парфянские, сасанидские, монгольские, арабские, персидские, османские, западноевропейские и другие монеты, изучение которых может иметь важное научнопознавательное значение для решения исторических вопросов.

В этом контексте изучение монет может иметь большое значение для решения существующих геополитических проблем. Деньги, как важный политический, социальный, экономический, историко-культурный объект страны, раскрывают торгово-экономические отношения между странами в разные периоды. В этом смысле денежные клады имеют важное значение. Обнаружение многочисленных денежных кладов еще раз подтверждает важность региона в глобальном процессе транзитной торговли, а также существующие взаимодействия между народами.

Регион играл важную роль в мировом торговом процессе, располагаясь на транзит-

ных путях, соединявших страны, игравшие большую роль в торговых отношениях. Это было связующее звено из торговых городов Персии в Армению и отсюда в важные торговые центры Черноморского бассейна.

Таким образом, на протяжении веков Армения считалась экономической буферной страной и нейтральной зоной для международной торговой деятельности. В этом процессе неоценима роль армянского купечества в развитии истории, культуры и хозяйства армянского народа. Армянское купечество выступает связующим звеном между странами Европы и Азии, способствуя развитию культурных обменов между народами.

Վեռա Բոյան

Սյունիքը որպես առեվտրական եվ մշակութային խաչմերուկ (ըստ դրամական գանձերի)



Նկ. 1. Հայտնաբերված դրամական գանձերի քարտեզ
Հեղինակ՝ Վեռա Բոյան

Նկ. 2. Աթենք, Ատտիկա (մ. թ. ա. 5-րդ դարի երկրորդ կես), Արծաթ, տիտրադրաիմա, 16,84 գր., 26 մմ
Դիմերեսին պատկերված է Աթենասի կիսադեմը: Դարձերեսին՝ բու:
Գտնվել է Սիսիանում (Սյունիքի մարզ) 1963 թ., ՀՊԹ, 17878

Նկ. 3. Վահանավանքի Ս. Աստվածածին եկեղեցուց գտնված արաբական արծաթե դրամների 17 բեկորներ, Գրիգորյան Գ., Վահանավանք, Երևան, 2007:

Նկ. 4. Մարտունու արծաթե դրամների գանձը, ՀՊԹ, 18170